ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԴՊՈՒ)

Ապահովագիր

Ապահովագիր կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով ավտոտրանսպորտային միջոցի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Փոխհատուցում ստացող անձ

Ապահովագրության պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի վարորդ կամ ուղևոր հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց կյանքին, առողջությանը ՃՏՊ-ի հետևանքով պատճառվել է վնաս,

Ապահովագրական հատուցման չափը՝

<u>Մարմնական վնասվածք ՃՏՊ-ի արդյունքում</u>

Հատուցում նիրականացվում է համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ Դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրության կանոնների (կախված վնասի բնույթից տոկոսային)։

<u>I, II, III խմբի հաշմանդամություն ՃՏՊ-ի արդյունքում՝</u>

Հատուցումն իրականացվում է միանվագ՝ կախված ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրված անձի բժշկա-սոցիալական փորձաքննության արդյունքում նշանակված հաշմանդամության կարգից.

Հաշմանդամության I կարգ նշանակելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրական գումարի 80%-ի չափով։

Հաշմանդամության II կարգն շանակելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրական գումարի 60%-ի չափով։

Հաշմանդամության III կարգ նշանակելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրական գումարի 40%-ի չափով։

<u>Մահ ՃՏՊ-ի արդյունքում</u>

Հատուցումն իրականացվում է միանվագ՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով։

Եթե ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած ծախսերը հատուցման ենթակա են երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության պայմանագրով (ԱՊՊԱ և այլն), ապա Ապահովագրողը վճարում է միայն այդ պայմանագրով սահմանված հատուցման սահմանաչափը գերազանցող ծախսերը։

Ապահովագրական պատահարներ

Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրության տարածքում տեղի ունեցած ՃՏՊ-ն, որի հետևանքով Ապահովագրված անձը ստացել է մարմնական վնասվածքներ, ձեռք է բերել հաշմանդամություն կամ մահացել է, պայմանով, որ նշված իրադարձությունները տեղի են

ունեցել Ապահովագրության պայմանագրում նշված տրանսպորտային միջոցում որպես վարորդ կամ որպես ուղևոր երթևեկելու ժամանակ:

Ապահովագրության տարածք

Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն

Ապահովագրական գումար, ապահովագրավճար, գործակալներին տրվող միջնորդավճարի չափ

Ապահովագրական գումար յուր. անձի համար	Ապահովագրված անձանց քանակ	Ապահովագրական գումար	Ապ. վճար
500 000	3	1 500 000	3 000
500 000	4	2 000 000	4 000
500 000	5	2 500 000	5 000
500 000	N(N>2)	N*500 000	N*1000

Ոչ պայմանական չհատուցվող գումար-չի կիրառվում
Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ – միանվագ, ապահովագրության պայմանագրի կնքման պահին
Պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ ՝

- ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր կամ հաշվառման հայտարարագիր,
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթեր
- Իրավաբանական անձի դեպքում՝ պետ գրանցման վկայականը
- Հետախոսահամար

Ապահովադրի (վարողի) գործողությունները պատահար տեղի ունենալու դեպքում ՝

- Չտեղաշարժել ավտոմեքենան,
- Չլքել, չթողներ, չհեռանալ պատահարի վայրից,
- Չընդունել որևէ պատասխանատվություն,
- տեղի ունեցած պատահարից հետո անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը կամ վարորդը պատահարի արդյունքում գտնվել է անգիտակից վիճակում: Անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը կամ վարորդը պարտավոր է անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին պատահարի մասին:
- Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում միանվագ իրականացնում է ապահովագրական հատուցումը: